ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ունկնդրման և վերարտադրման հմտությունների զարգացումը «Շրջված դասարան» մեթոդով

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Ռիտա Պետրոսյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց

Մարտունի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3
2. Գրական ակնարկ....4
3.Փորձարարական հետազոտություն....6
3. 2 Փորձարարական դաս-1....7
3. 3 Փորձարարական դաս 2....8
4.Եզրակացություն....9
Օգտագործված գրականության ցանկ....10
6. Հավելված....11
Դասապլան-1....11
Դասապլան-2....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը։ Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է։ Սխալ ուղղությամբ ազգ մը կխորտակեք վերջը»

Կոմիտաս

Դպրոցական առարկաների համակարգում արվեստները, մասնավորապես երաժշտությունը հանդես են գալիս ոչ միայն սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող, նրանց հուզազգացմունքային զարգացումը կազմակերպող, այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող միջոց։ Պատահական չէ, որ դեռ 5-րդ դարում Սահակ-Մեսրոպյան առաջին հայկական դպրոցներում երաժշտությանը տրվել է կարևոր դեր և նշանակություն։ Փոփոխվում են ժամանակները, փոփոխվում են նաև ուսուցման և դաստիարակության պահանջներն ու բովանդակությունը, մեթոդները, սակայն երաժշտությունը շարունակում է կատարել դաստիարակող և զարգացնող իր առաքելությունը։ Երաժշտությունը արվեստի և մշակութային գործունեության ձև է, որի արտահայտչամիջոցը հնչյունն է, արտահայտված կոնկրետ ժամանակի մեջ։ 20-րդ դարի կոմպոզիտոր Ջոն Քեյջն այն տեսակետն ուներ, որ յուրաքանչյուր հնչյուն կարող է երաժշտություն դառնալ։

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում են մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց ու բնության երևույթները։ Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցման միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար։ Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշպարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել աշխատել և արարել։

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին, մասնավորապես կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար։

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի իբրև մարդ անհատի ձևավորման, զարգացման վրա, տարբեր գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով։

Երաժշտական կրթությունն ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ անհատական մոտիվացիայով սովորող, որն ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանապես արվեստի նկատմամբ։

2. Գրական ակնարկ

<<Շրջված դասարանը>> խառը ուսուցման մոդել է, քանի որ այն աշակերտներին հնարավորություն է տալիս որոշել նյութն առցանց երբ և որտեղ սովորել։

Այս մոդելի կիրառման դեպքում այն ինչ ավանդաբար արվում էր դասարանում, արվում է տանը, իսկ այն ինչ արվում էր տանը, արվում է դասարանում։ Աշակերտները գալիս են ոչ թե ինչ-որ բան լսելու, այլ գալիս են նյութը արդեն ուսումնասիրած։

<<Շրջված դասարան>> մեթոդի կիրառության ժամանակ ուսուցիչը աշակերտներին նախապես տրամադրում է իր պատրաստած նյութը, որից օգտվելով աշակերտները ուսուցչին ուղղում են իրենց հարցերը, իսկ ուսուցիչը պատասխանում է դրանց և փորձում քննարկում ծավալել աշակերտների միջև, որպեսզի բոլորին թեման պարզ և հասկանալի լինի։

<<Շրջված դասարան>> մեթոդի նպատակներն են

1. Պասսիվ աշակերտների ներգրավվածությունը։
2. Մոտիվացիայի բարձրացումը։
3. Տեսադիտման անսահմանափակ հնարավորությունը։
4. Անհատական մոտեցման հմտությունները։

Այս մեթոդը ունի և դրական և բացասական կողմեր։

Դրական կողմերը։

√Դասաժամին սովորողը կատարում է ավելի բարձր մտավոր գործողություններ։

√Ուսուցիչը կկարողանում է տարբերակված ուսուցում իրականացնել։

√Հեշտանում է թեմայի կրկնության գործընթացը։

Բացասական կողմերը։

√Ուսուցչից պահանջվում է նախապատրաստական ավելի շատ աշխատանքներ

√Ուսուցչից պահանջվում են որոշակի հմտություններ։

√Սովորողի պատասխանատվությունը մեծանում է։

Այսպիսով <<Շրջված դասարան>> մոտեցումը բարձրացնում է դասի արդյունավետությունը և հանդիսանում է ինքնակրթության միջոց թե՝ ուսուցչի և թե՝ աշակերտի համար։

Այն առաջացնում է նաև ուսուցչի վարքագծի խոր փոփոխություններ՝ դեմառդեմ մոտեցումից անցնելով կողք-կողքի մոտեցման։ <<Շրջված դասարան>> մեթոդը մանկավարժական մոտեցում է, որը փոխում է ուսուցման մեթոդների ավանդական կազմակերպումը։

3.Փորձարարական հետազոտություն

3. 1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցակացրել եմ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի 2-րդ միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում։

Այս դասարանում կան աշակերտներ, ովքեր ունեն երաժշտության վերարտադրման խնդիր և դասապրոցեսի ընթացքում գրեթե չեն մասնակցում երգեցողությանը։ Ես որոշեցի կիրառել <<Շրջված դասարան>> մեթոդը, որպեսզի նրանց մոտ ևս զարգանան ունկնդրման և վերարտադրման հմտությունները, առաջանա հետաքրքություն դասապրոցեսին մասնակցելու, անկաշկանդ երգելու և իրենց մտքերն ազատ արտահայտելու վերաբերյալ։

Այս դասարանում սովորում են 23 աշակերտ՝ 12 տղա և 11 աղջիկ։

Նրանք ունեն տարբեր ընդունակություններ։ <<Երաժշտություն >> առարկան անցնում են շաբաթական մեկ ժամ, այն դասացուցակում տեղադրված է 3-րդ ժամին։

Այդ դասարանի հիմնական խնդիրներն են՝

1. Երգերը ունկնդրելուց հետո կատարելու կարողունակությունը։

2. Երգերը մաքուր հնչերանգով և ճիշտ առոգանությամբ կատարելու կարողունակությունը։

3. 2 Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը <<Սայաթ-Նովա>> և նրա <<Քամանչա>> երգն է <<Երաժշտություն և գրականություն>> թեմայից (տե՛ս դասապլան 1)

Քանի որ ընտրված էր <<Շրջված դասարան>> մեթոդը, աշակերտներին հանձնարարված էր ունկնդրել Սայաթ-Նովայի երգերից և կատարել տեսադիտում՝ «Սայաթ-Նովա» ֆիլմից։

Դասը սկսվեց հարց ու պատասխանով, որը վերաճեց մեծ քննարկման։

Աշակերտները սկսեցին ներկայացնել իրենց կարծիքները հայ ազգային երգարվեստի, աշուղների և նրանց երգերի վերաբերյալ։

Դասարանում կատարվեց Սայաթ-Նովայի «Քամանչա» երգի ունկնդրումը։

Այնուհետև դասարանը բաժանվեց 4 խմբի։ Յուրաքանչյուր խմբում ընդգրկվեցին այն աշակերտներից երկուսը, ովքեր չունեին ձայնային տվյալներ և ունեին երգը վերարտադրելու խնդիր։ Նրանց հետ կատարվեցին ձայնավարժություններ։

Երգը մի քանի անգամ ևս ունկնդրելուց հետո, այն բանավոր կրկնության մեթոդով ուսուցանվեց։ Երգի ուսուցումից հետո յուրաքանչյուր խմբին հանձնարարվեց կատարել երգի որոշակի հատված։ Աշակերտները երգում էին ոչ թե միասին, այլ հերթականությամբ, երգի մեջ ներգրավելով նաև այն աշակերտներին, ովքեր ունեին երգի վերարտադրման խնդիր։ Յուրաքանչյուր աշակերտ կատարում էր երգի որոշակի հատված։

Լավ երգողները արժանանում էին գովեստի խոսքերի, որը մյուսների մոտ ևս խթանում էր երգելու ցանկությունը։ Երգի կրնկներգը կատարում էին բոլորը միասին։

Այնուհետև անցա նոր դասի հաղորդմանը։

Ծանոթացրեցի նոր դասին, պատմեցի և հանձնարարեցի <<շրջված դասարան>> մեթոդով տանը ուկնդրել նոր թեմային վերաբերող նյութերը։

Վերջում հինգ աշակերտ ստացան միավորային գնահատական։ Մյուսներին խրախուսեցի գովեստի խոսքերով։

3. 3 Փորձարարական դաս 2

Դասն սկսեցի անցած թեմայի վերհիշմամբ։

Աշակերտները շատ լավ հիշում էին անցած նյութը, որը շատ դրական տպավորություն էր թողել նրանց վրա։ Հարց ու պատասխանի միջոցով ստուգվեցին նրանց գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ։ Մի քանի աշակերտ ՝ կատարելով հետազոտական աշխատանք՝ համացանցից օգտվելով, տարբեր տեղեկություններ էին բերել մի քանի հայ աշուղների մասին։

Սկսեցին համեմատել հայ գուսաններին, և աշուղներին, նրանց մեջ գտան ընդհանրություններ և տարբերություններ։ Զրույց ծավալվեց հայկական ազգային նվագարանների մասին։ աշակերտներից մի քանիսը իրենց հետ բերել էին երսսժշտական գործիքներ՝ դհոլ, շվի դուդուկ։Անդրադարձ կատարվեց նաև գործիքային երաժշտությանը

Այնուհետև աշակերտներից մեկը, ով ուներ գերազանց երաժշտական լսողություն և լավ ձայնային տվյալներ, կատարեց Սայաթ-Նովայի երգերից մեկը, իսկ երեք աղջիկներ կատարեցին պարային շարժումներ։ Եվս մեկ աշակերտ դհոլով կատարեց ռիթմական նվագակցություն։

Այնուհետև օգտագործելով շրջված դասարան մեթոդը աշակերտներն ունկնդրեցին Ռ. Մելիքյանի <<Վարդը>> ռոմանսը, որը բանավոր կրնկության մեթոդով ուսուցանվեց։

Քանի որ ռոմանսը իր տեսակով ավելի բարդ է, քան աշուղական երգերը, վերարտադրման խնդիր ունեցող աշակերտներին հնարավորություն ընձեռվեց դասարանում ևս մի քանի անգամ ուկնդրել երգը ականջակալների միջոցով։ Այս անգամ ևս նրանց հետ կատարեցի ձայնավարժություններ,որից հետո շտկվեցին մի շարք թերություններ։ Աշակերտները համոզվեցին, որ ռոմանսը երգ է, որտեղ ավելի խորն են արտահայտվում մարդկային հոգեվիճակները, զգացմունքներն ու հույզերը։ Ճանաչեցին նաև կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանին որպես հայկական ռոմանսի հիմնադիր։ Ստեղծվեց միջառարկայական կապ երաժշտության և գրականության միջև։ Աշակերտները անդրադարձան Վոլֆանգ Գյոթեին և Հովհաննես Թումանյանին, ով թարգմանել էր Վ. Գյոթեի «Վարդը» բանաստեղծությունը։ Զուգահեռներ

տարվեցին երկու ժողովուրդների մշակույթների միջև: Քննարկում ծավալվեց նաև Թումանյանի այն ստեղծագործությունների մասին, որոնք դարձել են երգեր և մեր առօրյայի անբաժան մասն են կազմում: Երեխաների ոգևորությունը շատ մեծ էր, բոլորն ուզում էին իրենց տեսակետն արտահայտել: Վերջում երեք աշակերտ ստացան միավորային գնահատական, իսկ մյուսներն արժանացան գովեստի խոսքերի:

4.Եզրակացություն

Աշակերտների ունկնդրման և վերարտադրման հմտությունները զարգացնելու համարանցկացվեցին երկու փորձարարական, հետազոտական դասեր՝ «շրջված դասարան» մեթոդով:

Այս մեթոդը հատկապես պասսիվ աշակերտների մոտ խթանեց հետաքրքրվելու, սովորելու, և դասին ակտիվ մասնակցելու ցանկությունը:

Այն օգնեց նաև դասապրոցեսի լիարժեք կայացմանը և աշակերտների ներգրավվածությանը: Հաղորդվեցին գիտելիքներ, տեսակետներ: ՈՒնկնդրեցին և սովորեցին աշուղական երգեր և ռոմանսեր:

Նրանք ծանոթացան երկու տարբեր երաժշտական ժանրերի և մեծ հետաքրքությամբ ուսումնասիրեցին դրանք:

Բոլոր աշակերտներն ունեցան ակտիվ մասնակցություն և խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը:

Իսկ այն աշակերտներն ովքեր ունեին երգը վերարտադրելու խնդիր, իրենց ընկերների և այս մեթոդի օգնությամբ փորձեցին հաղթահարել այն:

Այսպիսով՝ ես եկա այն եզրակացության, որ «շրջված դասարան» մեթոդը հնարավորություն է ընձեռում սովորողներին ավելի խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրել տրված թեման, լինել ավելի տեղեկացված:

Իսկ պասսիվ աշակերտներին՝ լինել ավելի ակտիվ, անկաշկանդ և ազատ արտահայտել իրենց մտքերն ու կարծիքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կոմիտաս «Հոդվածներ և ուսումնասիրություններ» Երևան 1994թ
2. ՈՒսուցչի ձեռնարկ «Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում» Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան /Զանգակ 97/, Երևան 2011թ
3. ՈՒսուցչի մեթոդական ձեռնարկ «Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում» Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան /Զանգակ 97/, Երևան 2008թ
4. Երաժշտություն առարկայի չափորոշիչ Երևան 2012
5. Վիկիպեդիա
6. Eduarmenia

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Երաժշտություն	Ամսաթիվ	12.02.2022	Կիսամյակ	2	Դասարան	V
Թեմա	«Երաժշտություն և գրականություն» «Աշուղական երգ» «Սայաթ Նովա» «Քամանչա» Ունկնդրել «Դուն են գլխեն» և «Քամանչա» երգերը Ուսուցանել «Քամանչա» երգը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, հեռախոս, ականջակալներ						
Դասի նպատակը	Ծանոթացնել հայ աշուղական երգարվեստին Կարևորել աշուղական երգարվեստի դերը հայ ազգային մշակույթի մեջ։ Զարգացնել հմտություններ ունկնդրելու և կատարելու աշուղական երգեր։ Զարգացնել հմտություններ ուկնդրելու և կատարելու երգեր՝ մաքուր հնչերանգով և ճիշտ առոգանությամբ։ Արժևորել հայ աշուղական երգարվեստը։						

Վերջնար-դյունքները	Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի հայ աշուղական արվեստի նմուշներով Երգի աշուղական երգեր մաքուր հնչերանգով և ճիշտ առոգանությամբ։ Համեմատություններ կատարի տարբեր աշուղների ստեղծագործությունների միջև Ցուցաբերի հետաքրքություն տարբեր երաժշտական կատարումների նկատմամբ Արժևորի հայ աշուղական արվեստը

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական Գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	
10ր	Աշակերտները «Շրջված դասարան» մեթոդով սկսեցին քննարկել տրված նյութերը Սայաթ Նովայի վերաբերյալ և ուկնդրված երգերը։ Համեմատեցին մյուս աշուղների հետ, կարծիքներ հայտնեցին։	Հարցադրումնով բոլոր աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին։ Տալ ուղղորդող հարցեր	Ով ՞ է Սայաթ-Նովան։ Ի՞նչ ստեղծագործություններ ունի։ Սիրո՞ւմ եք աշուղական երգարվեստը։	Հարցադրումների մեթոդ

5ր	Ուկնդրեցին <<Քամանչա>> երգը։ Ձայնավարժություններ կատարեցին	Ուղորդել	Ի՞նչ գիտեք հայ աշուղների մասին։ Ո՞ր երգերն եք սիրում։	
15ր	Սովորեցին <<Քամանչա>> երգը, այնուհետև սկսեցին հերթով կատարել այն։	Կատարել ճշտումներ և շտկումներ	Աշուղական երգերն եք ավելի շատ սիրում թե՞ ժողովրդական։	<<Շրջված դասարան>> մեթոդ
10ր	Ընթերցեցի նոր թեմայի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձնարարություններ տալ։ Պատասխանել հարցերին	Ինչ կարծիք ունեք <<Շրջված դասարան մեթոդի մասին>>	

Դասապլան-2

Առարկա	Երաժշտություն	Ամսաթիվ	19.02.2022	Կիսամյակ	2	Դասարան	V
Թեմա	«Երաժշտություն և գրականություն» Ռոմանս Ռ. Մելիքյան «Կենսագրությունը և ստեղծագործությունը» «Վարդը» երգի ուսուցումը Ուկնդրել Ռ. Մելիքյանի «Առուն և աղբյուրը» երգ-ռոմանսը:						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, հեռախոս, երաժշտական գործիքներ, ականջակալներ:						
Դասի նպատակը	Ծանոթանալ <<ռոմանս>> երաժշտական ժանրին: Ճանաչել կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքքյանին և նրա ստեղծագործությունները: Համեմատել երկու երաժշտական ժանրերը: Կարևորել Ռ. Մելիքյանի ավանդը հայ երաժշտաարվեստում: Երգել ճիշտ առոգանությամբ և մաքուր հնչերանգով:						

Վերջնար-դյունքները	Տարբերի և նշի ռոմանսի և աշուղական երգի առանձնահատկությունները, ընդհանրությունները և տարբերությունները։ Հաղորդակցվի հայկական երգարվեստի նմուշներով։ Երգերը կատարի ճիշտ կեցվածքով, մաքուր հնչերանգով և ճիշտ առոգանությամբ։ Համեմատի երկու երաժշտական ժանրերը։

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
10ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Ո՞վ է Ռ. Մելիքյանը	Հարցադրում-ների մեթոդ
15ր	Օգտագործելով «Շրջված դասարան» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ քննարկել, վերլուծել նախապես տանը դիտված և ունկդրած նյութերից Համեմատականներ անցկանցրեցին աշուղական երգի և ռոմանսի միջև։ Հայտնեցին իրենց կարծիքը Սայաթ-	Խրախուսել և ոգևորել աշակերտներին, բարձրացնել մոտիվացիան, մեծացնել հետաքրքությունը Բոլոր աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող	Ի՞նչ ստեղծագործություններ է գրել։ Ի՞նչով է առանձնանում մյուս կոմպոզիտորներից։ Ձեզ դուր գալի՞ս են նրա ստեղծագործությունները։	Մտագրոհ «Շրջված դասարան» մեթոդ

	Նովայի և Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործությունների մասին, կատարեցին Ս. Նովայի երգերից։	հարցեր Կատարել ճշտումներ	Ձեզ դու՞ր եկավ նոր երգը	
20ր	Ուկնդրեցին, ապա սովորեցին <<Վարդը>> ռոմանսը։ Պատասխանեցին գրքում գրված հարցերին (Հարցեր և առաջադրանքներ բաժնից) Ծանոթացան նոր դասին։ Ուկնդրեցին հատվածներ, ուկնդրեցին հատվածներ Ալ. Հարությունյանի «Հայրենիք» կանարից հատված	հարցադրումներ		Բանավոր կրկնության մեթոդ։ Հարց ու պատասխանի մեթոդը